



ՆԱԽԱՐԱՐ

MINISTER

“.....”..... 201 թ.

..... / .....

**ՀՐԱՄԱՆ N 349-Ա**

18 նոյեմբերի 2016թ.

ք. Երևան

**«ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆԻ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ» ԳՈՐԾՈՂ ԿԱՌՈՒՅՑԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ  
ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N1060-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 1.3 «Սփյուռք» բաժնի 1-ին կետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 11-ի N1049-Ն որոշման N1 հավելվածի 13-րդ կետի 4-րդ ենթակետով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Մինչև Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության և տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության «Մեկ պատուհանի սկզբունքով» մշտական գործող համատեղ կառույցի խորհրդի ձևավորումը՝ սփյուռքահայ ներդրողներին խորհրդատվական ծառայություններ տրամադրելու, բիզնես ծրագրեր առաջարկելու, ներդրումների սահուն իրականացմանն օգնելու համար, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությունում ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատանքային խմբի ղեկավար նշանակել «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն Վարազդատ Կարապետյանին (համաձայնությամբ):

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարի և տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի համատեղ հրամանի ուժի մեջ մտնելը:

**ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈՒԲՅԱՆ**

**ԿԱԶՄ  
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ**

1. Վարազդատ Կարապետյան – «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն (համաձայնությամբ)
2. Ներսես Քիվո - «Սիրիահայերի միություն» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ)
3. Թոմիկ Ալեքսանյան – սփյուռքահայ գործարար (համաձայնությամբ)
4. Կարեն Ավանեսյան - Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության աշխատակազմի Եվրոպայի հայ համայնքների վարչության պետ
5. Սարգիս Ալեքսանյան - Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հեռահաղորդակցության վարչության տեղեկատվական-վերլուծական բաժնի պետ
6. Հայկ Ենգիբարյան - Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության աշխատակազմի համահայկական ծրագրերի վարչության մշակութային, սպորտի և երիտասարդության ծրագրերի բաժնի առաջատար մասնագետ